

**ՈՍԿԵՄԱԶԻԿԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու  
բարբառ (խոսվածք)**

Մի եղնակին և ըլըմ, դա իրան հետ մի ախչիկ և բերած ըլըմ, մի ախչիկ էլ իրա մարթն և ունենում ծերքի կնգանից: Մի կով են ունենում:

Էն մերացուն կովը տալիս և էն եթիմ ախչիկանն ու ասում և.— Տար ըրածացրու:

Մի կտոր հաց և տալի, ասում և.— Վայ քու գլխին կենա, տար կովն ըրածացրու, էս հացն էլ ըրիգունը հետո բի, հանդի հացն անուշ կլի, կուտենք ըրիգունը, էս թեշիկն էլ տար մանե: Էնա նա սոված, թեշիկ մանելով գնում և, գալի: Մի օր էլ հանդըմը թեշիկը մտնելիս տեղը— թելը կտրվում և, թու և ըլըմ, մի ծակով դվեր և ընգնում: Էդ ծակովը մտիկ և անում, տենում և — հրե ուշաբի կնիկը նստած, արճիճը մաստակի տեղ բերնըմը ծամում և, հետն էլ ջահրա և մանում:

Ասում և.— Դեղի ջա՛ն, դեղի՛, թեշիկս ինձ տաս:

Ասում և.— Հավքն իր թևովը, օցն իր պորտովը դեսն էկել չի. դուն էդ ով ես, որ սիրտ ես արել էկել: Դվեր արի բալա ջան, դվեր արի տենամ էդ ով ես:

Դվեր և գնում, ասում և.— Դե արի գլուխս քթվե:

Քթվում և, ասում և.— Վո՛ւյ հրես, հրես, կասենաս իմ նանի թել-թել մազերն ըլի: Հմա ո՞րդի, մազերը ոնց որ խոզի ջագատ ըլին, մեչն էլ անիժ, էլ որթ, էլ մորմոնջ՝ լիքը:

Էնա էդ պառավին դիր և գալի, ասում.— Դե սոված կլիս, գնա տաշտիցը հաց վի կալ, կի:

Գնում և տենում տաշտի միջինն աթար և, ասում և.— Վո՛ւյ, կասենաս իմ նանի թխած հացն ըլի: Ասում և.— Դե հմի էլ գնա թթու կի:

Գնում և թթվի կարասը բաց և անում, տենում և որ՝ օց ու խլեզը իրար վրա դասած են, աղ դրած:

Ասում և.— Վո՛ւյ, կասենաս իմ նանի դրած թթուն ըլի:

Դա մի գեշ բան էլա ասում չի, ինչ շհանց և տալի, ուտում չի, հմա որ հարց և ըլըմ, ասում և.—

Կերա՞ր բալա ջան: Ասում և.— Հա՛ :

Ասում և.— Դե որ կերար, բալա ջա՛ն, արի մի էրկու բան ասեմ:

Ասում և.— Ասա:

Ասում և.— Բալա ջան, էս քի շատ հավան կացա, դուն իմ ախչիկն ես, իմ ըխչկանից էլ շատ սիրեցի: Ասում և.— Հրետ ըտիան էրկու ջուր և գալի, մինը սև և, մինը սպիտակ, գլուխդ կոխե սպիտակ ջրի տակն ու անց կաց: Դա որ տհե և անրում ու անց կենում հա, մազերը դառնում են ոսկի:

Ասում և.— Վո՛ւյ դեղի ջան, իմ խորթ նանը որ տենա մազերս սհե և, գլուխս կպոկի, հմի կովս էլ ով գիդե՛ կորավ, էս գնամ ի՞նչ ջուղաբ տամ:

Ասում և.— Վախիլ մի, ախչիկ ջան: Էնա մազերը կլտըմ և, մի դառին և կարքմ, միջին դնում, ասում և.— Հմի գնա, կովի պոզերիցը մինը եղ և դուս գճըմ, մինը՝ մեղը, ծծեապրի: Էդ չոր հացն էլ տար իրա գլխովը տուր:

Ասում և.— Վախում եմ:

Ասում և.— Վախիլ մի:

Էնա տանում և, ոնց որ էդ պառավն ասել էր՝ տհենց և անում:

Մի քանի օր անց և կենում, դա էնքան սիրունանում և, էնքան քոքանում և, որ էլ ասելու ոչ:

Դառնում և մի հուրի-փերի:

Մեր ու ախչիկ ասում են.— Վա՛յ տամ սրա գլխին, էս ի՞նչ և ուտըմ, որ չոր հացը եղ և բերքմ, հմա էդ սհե քոքանում և, սիրունանում և:

Էնա էն մի պլոկվածն ասըմ ա.— Հմի էլ ես տիմ գնալ կովն ըրածացնելու:

Մերն էս ախչրկա հետ դայմախ ա դնըմ, կարաք ա դնըմ, տար, իլիկ մանելով, խաղ ասելով կովն ըրածացրու, սրանք էլ կի, քոքացի, սիրունացի, վայ տամ նրա գլուխը:

Դա կովը տանըմ ա: Դեռ հլա թեշիկն էրկու անքամ ըլորած չի ըլըմ, թելը կտրվըմ ա, թոլ ա ըլըմ, եղ էն ծակովը նի ընգնըմ:

Ասըմ ա.— Ա՛քավթառ, ա՛քավթառ, էղ թեշիկը դես տուր:

Ասըմ ա.— Հավքն իր թետով, օցն իր պորտով դեսն էկած չի, դուն էղ ի՞նչ մրգանեն կտրած միլլեթ էս (վախը կտրած մարդ էս), որ դեսն էկել էս: Դվեր արի, դվեր արի, ախչիկ ջա՛ն:

Էնա գնըմ ա:

Ասըմ ա.— Ախչիկ ջա՛ն, արի գլուխս քթվե:

Գնըմ ա կուշտն ու ասըմ ա.— Պա՛, պա՛, պա՛, պա՛, պա՛, գրողը քու գլխին տանի, սաղ որթունք ու մորմոջ ա, էս սրան քթվող ե՛մ:

Էնա թքըմ ա ու դրաղ ըլըմ:

Հմի էլ ասըմ ա.— Դե գնա հաց հանե, կի, սոված կլիս:

Գնըմ ա տաշտի կուշտն ու ասըմ ա.— Ախկ, ախկ, ախկ, էս ի՞նչ ա էս աթարը, որ էս ուտեմ, հսայ իմ շարմաղ հացը, սա թողած էղ տիմ ուտի՛լ: Եղ թքըմ ա ու դրաղ ըլըմ:

Ասըմ ա.— Դե դնա թթու հանե կի կրասիցը:

Գնըմ ա կրասի կուշտն ու էղ տհե ասըմ ա.— Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ,— Էղի կտան վրա էղ ա փախչըմ:

Ասըմ ա.— Վայ տամ էղ քավթառ գլխիդ, ինձ օցի ու խլեզի թթու էս ուզըմ ուտացնե՞ս, իմ նանի դրած շարմաղ թթվին ի՞նչ ա էլել:

Էղ պառավին դա շատ ա դժար գալի, ասըմ ա.— Դե արի ըստի: Գնըմ ա կուշտը, ասըմ ա.— Ըստիան էրկու ջուր ա գնըմ, մինը սպիտակ ա, մինը սև. գլուխդ սպիտակի տակին չի դնես, սևի տակին կդնես:

Գալիս ա գլուխը դնըմ սևի տակին, էնա հա, դրա էրեսը սևանըմ ա:

Գալիս ա ասըմ.— Քավթառ, էս ի՞նչ արիդ:

Ասըմ ա.— Գնա, դանջղ անսկամ, քու լայաղը դա յա:

Էնա ղլմադալ ա բցրացնըմ, ճվճվըմ ա, ծվծվորիկն ա գալի, պառավը բերըմ ա մի դառին էլ դրա գլուխն ա անց կացնըմ, գոռացնելով էղ ա դրգըմ, ասըմ ա.— Գնա էն կովի մի պոզը արին ա, մինը ժահրն ա, գնա ծծե, դուն էլ կքոքանաս էն խորթ քվորդ պես:

Էնա գնըմ ա, ծծըմ ա, օրն օրի վրա զաբնըմ ա, դառնըմ ա մի դոթուր ձիու նման:

Մի էրկու օր տանըմ ա կովն ըրածացնըմ ա, բերըմ, մերն ասըմ ա.— Վայ տամ դրա գլխին, էղ կովը մորթեցեք, ըրեխես խարաբ էլավ դրա էղնա պըտիտ գալով:

Էն էթիմ ախչիկը տենըմ ա, որ մորթիլ տին, գնըմ ա էն պռավի կուշտը, ասըմ ա.— Դեղի ջան, կովը մորթըմ են, հմի ի՞նչ անես:

Ասըմ ա.— Լաց մի ըլիլ, ախչիկ ջան, թող արա մորթեն: Դու մսիցն ուտես ոչ: Հմա ով որ ուտե՛ դու նրա դեն գձած ոսկոռնին հվաքե, տար մի տեղ թաղե, հլա տես ինչքան օգուտ կանես:

Էնա կովը մորթըմ են, էղ նաչարը ջանին ցավ ա տալի, լաց ա ըլըմ:

Միսն իրանք ուտըմ են, դրան տալիս չեն, ինքն էլ ուզըմ չի: Որ պրծնըմ են հա, դա ոսկոռնին հվաքըմ ա:

Ասըմ են.— Տո՛ ֆողը քու գլխին, էղ ոսկոռնին ի՞նչ տիս անիլ:

Ասըմ ա.— Ձեզ մատաղ ըլիմ, ոսկոռը դեն մեք գձիլ, ինձ տվեք, տանիլ տիմ թաղիլ, էղ կովն ինձ պիեղ ա, մոր համ ա տվել:

Ինչքան դրա վրա ծիծաղում են, գլխին տալիս են, դա անգաճ չի անում, հվաքում ա: Եփ որ չիմն էլ գխտվում են, տանիցը դուս են ըլում հովերընը ման գալու, դա գնում ա դռան տակին մի ֆոր փորում, էդ ոսկոռնին սագով միչին շարում ա ու թաղում:

Շատ ա կենում, քիչ, գիդեմ ոչ, դրա խորթ մերն ու քիրը գուքվում են, զըթարվում, գնում են խեչ, դրան տանը թողում են, ասում են.— Վայ քու գլխին, էս տունը թամուզ կավլես, կթամզես, եղնա էս կորեկն էլ տանը շաղ կտաս ու եղ հատ-հատ կհավաքես, եղնա կնստիս ու լաց կլիս, էնքան լաց կլիս, էս ամանն ըրտասունքով կլքցնես: Ասում են ու իրանք գնում են:

Դա տունը, դուռը թամզում ա, ամեն բանն ուսլուբին իրա տեղն ա դնում, եղնա էն կորեկը շաղ ա տալի, թագադան հվաքում ա, հետն էլ լաց ա ըլում:

Էդ վախտը մի ինձ պես պառավ ա գալի տուն, ասում ա.— Ախչիկ ջան, խի՞ ես լաց ըլում ու սհե մխկտալով հատ-հատ կորեկը հվաքում:

Ասում ա.— Հե՛՛չ, դեղի ջա՛ն, սիրտս իրան իրան լքցվեց, էնա լաց եմ ըլում, էս կորեկն էլ սհե եմ անում, որ պարապ չի կենամ:

Ասում ա.— Ինձ խի՞ ես խափում, ախչիկ ջան, դուզն ասա:

Էնա տենում ա կարալ չի սուտն ասե, ասում ա.— Դե եսիմ, դեղի ջա՛ն, ինձ ասում են սհե արա, ես էլ անում եմ:

Ասում ա.— Վա՛յ դրանց գլխին, դուն էլ ավլով հվաքե, մի տեղ բի թոփ արա, որը թոփ կլի՛ վի կալ, որն ըլիլ չի, ավլի ծերով դեն աճա: Թասն էլ մի քիչ ջուր աճա, մի պտղունց աղ գձե, դի ըտի, թող գան հե գիդենան ըրտասունք ա, ֆողեմ ես դրանց գլուխը, եթիմ ըրեխա են գդել, որ ֆոքին հանեն: Տհե ասում ա ու ինքը գնում: Դա էլ բերում ա էդ պառավի ասածնին անում, պրծնում:

Էնա որ տունը խովլաթվում ա հա, գնում ա դռան տակը մտիկ ա անում, ասում ա.— Հլա տենամ ի՞նչ կա ընդի:

Տենում ա՛ աչկը բարին տենի, մի կոխտա դուլան ընդի թամքած, մի բոխչա շոր էլ ընդի կապած: Դա վեր ա ունում, էդ շորերը հաքնում, դառնում ա մի հուրումալաք, քուռակին նստում ա ու եղներնուն գնում ա խեչ: Ոսկե մագերն էլ ուսերովը փորում ա, ոտնամաննին ու շորերն էլ պլպլալով, գնում ա հասնում խեչը:

Խալխը չիմ մայիլ են կտրում, գալիս են ձիու գլուխը բռնում, վեր ա գալի, գնում ա խեչընը ուխտ ա անում, էդ ձիուն նստում ա, թռչելով էդ գալի տուն: Ձին թոցրած գալու վախտը ոտնամաննու մինը վեր ա ընգնում, դա գլխի չի ըլում: Ոտնամանն ընգնում ա ջրի մեչը: Գալիս ա տուն, էդ ձին բրախում ա՛ գնում ա իրա տեղը, շորերն էլ հանում ա ընդի դնում: Եղ իրան գրչոտ շորերը հաքնում ա, ընդի պատի տակին նստում:

Նհանք խեչիցը էդ են գալի, գալիս են տենում պատի տակին կուչ Էկած:

Գլխին տալիս են, ասում.— Ի՛, վա՛յ քու գլխին, դուն էլ քեզ ախչիկ ես հաշվում: Խեչը մի հուրումալաք ախչիկ էկավ, ոսկի մագերն ուսովը փռած, շորերն ու ոտնամաննին պլպլեին, հրեդեն ձիով էկավ, խեչընն ուխտ արավ, էդ նի էլավ ձիուն ու գնաց:

Ասում ա.— Դե ի՞նչ անեմ, ինձ տարաք ոչ, որ ես էլ էի տեհել:

Ասում են.— Ա՛յ ֆողը քու գլխին, դուն էիր պակաս, որ ընթավուր հուրումալաքին տենեիր, խելքդ էլ գներ, ընգնեիր ձիու ոտների տակն ու մեռնեիր:

Դա սուս ա անում, էլ ձեն չի հանում: Ըրիգունը թաքավորի նոքարնին տանում են ձիանը ջուր տալու, ձիանը փռացնում են ու էդ դառնում, էն ոտնամանը միչին վլվլալեն տենում են, խրդնում են, խմում չեն: Նոքարնին մտիկ են անում, տենում են միչին մի գաղ ա վլվլին տալի:

Գնում են թաքավորի տղին ասում.— Թաքավորն ապրած կենա, սհե-սհե մի բան կա ջրումը, վովորում ա, ձիանը խրդնում են, ջրին մոտ չեն գալի:

Ասրմ ա.— Գնացեք թոռ գձեցեք, բոնեցեք, բերեք հլա տենամ էն ի՞նչ ա:

էնա թոռ են գձրմ, տենրմ են ոտնաման ա:

Բերրմ են տալի թաքավորի տղին: Թաքավորի տղեն ասրմ ա.— Սա որ էսքան ա սիրուն, բա իրան հաքնողն ինչքա՞ն կլի սիրուն:

Ընդիան թաքավորն ասրմ ա.— Ման ածեք տենանք ում ոտովն ըլի, նրան իմ տղի հմար ուզիլ տիմ:

Ման են ածրմ, օխտը գեղ պտըտրմ են, մնին էլա ըլրմ չի: Բերրմ են էն ոսկե մագերավորանց տուն: Էն խորթ մերը մի խատատ առնրմ ա իրան ախչկանը հաքցնրմ, հմա ո՞րդիան կլի:

Ասրմ են.— Հլա նրան էլ հաքցնենք: Հաքցնրմ են, կոխտա ոտին ա ըլրմ: Հմի գալ տին որ նշնեն: Էն գյուլլա դիբաճն ընդի մոթճորվրմ ա, ասրմ ա.— Մրան տանիլ տին, իմ ախչիկը տանը տի մնալ:

Էրկու օրեն վրա հրսանիքը գալիս ա, դռանը կաղնրմ: Էդ խորթ մեր գյուլլի էկածը տանրմ ա էդ ոսկե մագավորին թորոնն ա կոխրմ ու մի վենձ սալ քար էլ վրեն ա դնրմ, իրա պոճոկվածին տանրմ ա թախտին դնրմ: Դրանք քեփ են անրմ, ուտրմ են, խմրմ, հազըրվրմ են, որ տանին: Էդ վախտը որցակը գալիս ա թորոնի վրա կաղնրմ, ասրմ ա.— Կիկդիդի, Սներեսը թախտին ա, Ոսկեմագիկը թորնրմն ա:

Էդ խորթ մերը որցակին ծեծրմ ա, հետ ածրմ, հմա էդ որցակը գալիս ա վրեն կաղնրմ, կանչրմ: Դա որ էդ ուզրմ ա գնա հետ ածե հա, թաքավորի տղեն ասրմ ա.— Սուս կացեք, հլա դենը մի անիլ, թող արա մին էլ կանչի:

Մին էլ ա կանչրմ:

Թաքավորի տղեն մի լավ իմանրմ ա, ասրմ ա.— Հլա գնացեք թորոնը բաց արեք:

Բաց են անրմ, տենրմ հրե ընդի դառինը գլխին՝ կուչ էկած ա Ոսկեմագիկը: Էտա դրան ըտիան դուս են բերրմ, գնրմ են նրան թախտիցը հետ ածրմ, մոր ըրեսին էլ կոււմ են անրմ, թքրմ, խայտառակ, բիաբուռ անրմ:

Ոսկեմագիկին ուզրմ են տանին նոր շորեր հաքցնեն, ասրմ ա.— Ինձ հմար շորեր ունիմ, ուզիլ չի, ես իմ շորԼրը կհաքնիմ:

Էնա գնրմ ա իրա շորերը դռան տակից հանրմ, հաքնրմ ա, դառինը գլխից դեն ա գձրմ, ոսկե մագերը հուսած՝ ուսին ա գձրմ, զուքվրմ, զրթարվրմ, դուլանին վեր ա ըլրմ, դուս գալի մեյդան: Խալխը որ դրան մտիկ ա անրմ, մնրմ են ըրմացած, ասրմ են.— Սա էդ խեչն էկող ախչիկն ա:

Նոր դրան բերրմ են հրսանիք անրմ թաքավորի տղի հետ, հասնրմ են իրանց մուրագին, դուն էլ հասնես քու մուրագին: Էն պլոկված խորթ մոր անսկամն էլ մնրմ ա տանը, ոնչ ուզող ա ըլրմ, ոնչ բան (վա՛յ տամ նրա էլ, իրա մոր գլխին էլ):